



## ՏԱՆՍ ԿԻԼԻԿԻԱՅԻ ԳԱՀԱԿԱԼԻ ԵՎՐՈՊԱ ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Էջմիածին» ամսագրի 1967 թվականի մայիսի համարում (էջ 17) հրատարակվել են՝ ա) Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի մայիս 2 թվակիր պատասխանը՝ մասով գործակալության թղթակցի հարցին՝ մայիս ամսվա ընթացքում S. Տ. Խորեն կաթողիկոսի Վատիկան, Ժնև և Քենտրոնական եկեղեցական կենտրոններին տրվելիք այցելության կապակցությամբ և բ) Մայր Աթոռի դիվանի ապրիլ 14 թվակիր հայտարարությունը՝ ի պատասխան սփյուռքից եղած մի շարք հարցումների, ի մասին Անթիլիասի Գահակալի և Էջմիածնի իրավասության ներքև գտնվող Եվրոպայի հայ եկեղեցիներին և համայնքներին՝ տրվող այցելությանց:

Այժմ խմբագրությունն հրատարակում է S. Տ. Խորեն կաթողիկոսի անունից տ. Գարեգին եպս. Սարգսյանի՝ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին ուղած ապրիլ 26 թվակիր համակը՝ դրան պատասխան Մայր Աթոռի դիվանի ապրիլ 14 թվակիր հայտարարության:

Անթիլիաս, 26 ապրիլ 1967

**Ն. Ս. Օծություն Վեհափառ Տ. Տ. Վազգեն Ա. Կաթողիկոսին  
Ամենայն Հայոց**

Ս. Էջմիածին

**Վեհափառ Հայոց,**

Այս համակը կգրեմ հանձնարարությամբը Մեծի Տանն Կիլիկիո Վեհափառ Հայրապետին՝ Նորին Ս. Օծություն Տ. Տ. Խորեն Ա. Կաթողիկոսին:

Ամսույս 21-ին Բեյրութի հայ թերթերեն ոմանց մեջ կարդացինք «Հայտարարություն» մը Մայր Աթոռող Դիվանին կողմէ հրապարակված 14 ապրիլին որուն մեջ կը պահի թե՝ «Ամենայն Հայոց Հայրապետը որևէ տեղեկություն չունի Տանն Կիլիկիո Գահակալի ճանապարհորդության և այցելությանց մասին, հառաջիկա ամիսներին, Ս. Էջմիածնի իշխանության ներքև գտնվող Եվրոպայի հայ եկեղեցիներին և համայնքներին»:

Այսու գորով պարտք համարեցինք հայտնել Ձերդ Վեհափառության որ Աթոռին Վեհափառ Հայրապետի ձեռնարկած ուղևորությունը Եվրոպա երթեք «այցելություն» մը չէ «Ս. Էջմիածնի իշխանության ներքև գտնվող Եվրոպայի հայ եկեղեցիներին և համայնքներին»:

Ս. Աթոռիս 18 ապրիլ 1967 թվակիր հաղորդագրությունը, որ 19 ապրիլին ուղարկված է արդեն Մայր Աթոռ ս. Էջմիածին, հատակորեն ցոյց կուտա ուղևորության հաջորդական հանգրվանները և հատակները: Իր այս հանապարհորդության ընթացքին, Աթոռիս Վեհափառ Հայրապետը ս. Էջմիածին ենթակա ոչ մեկ թեմի, եկեղեցւու կամ համայնքի պաշտոնական այցելություն կուտա:

Ուստի պիտի խնդրենք Ձերդ Վեհափառութենեն, որ նկատի առներ այս ճշտումը և ոչ մեկ ձևի բյուրիմացության առիթ տրվեր այս առիթով:

Մատչելով ի հասբույր Ձերդ ս. Աջուն և ցանկալով տեսության հայրության Ձերդ, մնամ խոնարհ ծառա՛՝

ԳԱՐԵԳԻՆ ԵՊՈ. ՍԱՐԳԻՍՅԱՆ

Հանուն Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի, Գերագույն Հոգևոր խորհրդի ատենապետ տ. Հայկազոն արքեպ. Արքահամբանը պատասխանում էր տ. Գարեգին եպիսկոպոսի համակին մայիս 6 թվակիր ենտևալ գրությամբ.

Էջմիածին, մայիս 6

Գերաշնորհ տ. Գարեգին եպս. Սարգիսյանին.

Անդիլիս

Վեհափառ Հայրապետը այսօր՝ մայիսի 6-ին, ստացայ Ձեր 26 ապրիլ թվակիր համակը և հանձնարարեց ինձ, որ փոխանցեմ Ձեզի Իր սիրո ողջունը և բարի մաղթաճենները:

Անդրադառնալով Նորին Սրբություն Խորեն կաթողիկոսի հանձնարարությամբ Ձեր կատարած ճշումներուն, մնենք Ձեր ուշադրության կկամենայինք հանձնել ենտևալ պատուիք:

Իրոք, ապրիլի առաջին օրերեն սկսայ, մեր եկեղեցական մեկ քանի կեղծուների մեր Վեհափառը ստացավ համակներ և հեռախոսներ, որոնք հարցեր կոտային և լուսաբանություն կակնելուն Տանն Կիլիկիոն գահակալի զանազան երկիրներ ացեղության մասին, նաև ստուգ տեղեկություններ ստացվեցան պատեղ, որ Խորեն կաթողիկոս և Ձերդ Սրբազնությունը անձամբ, գրություններ եք հղած Էջմիածինի իշխանության ներքն գտնվող եկեղեցական համայնքներու հոգևորականներուն և ազգայիններուն՝ Ձեր ծրագրած ացեղությանց կապակցությամբ:

Որով շատ բնական էր, որ մեր Հայրապետը Իրեն ուղղված հարցումներուն պատասխաներ Մայր Աթոռիս 14 ապրիլ թվակիր հայտարարության իմաստով:

Ձեր ուղևորությանց շրջաբերական հաղորդագրությունը, 18 ապրիլ թվակիր, Մայր Աթոռ ստացանք մայիսի 4-ին՝ առանց որևէ կից պաշտոնական գործառական:

Կխորհինք, թե բարվոր և պատշաճ էր, որ նման ուղևորության մասին, Կիլիկյան Աթոռի կողմէն նախօրոք հայտնվեր Ամենայն Հայոց Հայրապետին՝ ի գիտություն: Լավագույն առիթ մըն էր ցոյց տալու օրինականության և եղբայրական միասնության ոգի, Մայր Աթոռ ս. Էջմիածին հանդեպ և լավագույն կերպը՝ կանչնելու ամեն թյուրիմացություն:

Եվ այս ոչ միայն Եվրոպայի մեր եկեղեցական համայնքներուն, այլ նաև քոյր եկեղեցներու պետքերու Ձեր ացեղությանց կապակցությամբ: Անա թե ինչու Հայոց Հայրապետը բոլորովին անտեղյակ Ձեր ծրագրիներուն և Ձեր հետապնդած նպատակներուն, մամուլի գործակալությանց կողմէ մայիսի 2-ին Իրեն եղած հարցումներուն պատասխանեց ծանոթ հայտարարությամբ, որուն տեքստը կգտնեք ներփակ:

Այս առթիվ չենք թաքցներ Վեհափառ Հայրապետի և մեր ամենուս մտավախությունը, թե միգուցե Ձեր այս ուղևորությունը նպատակ ունենա այն տպավորությունը տարածելու, թե Անդիլիս Կիլիկյան Աթոռը կեղրունք կը հանդիսանա սիյուռի հայ եկեղեցական կյամքին և հայ հավատացյալ ժողովորդին այնպես, ինչպես վերջին տարիներուն, մանավանդ 1963-ի Երուսաղեմի ողջագործումն հետո քանից ցավով հաստատած ենք: Ձեր Աթոռի՝ նման միտումի վերջին մեկ արտահայտությունը հանդիսացավ Եթովպի Վե-

ներկա կայսեր այցելության առթիվ ձեր պաշտոնաթերթ «Հասկ»-ի մեջ լույս տեսած հաղորդագրության նորակացությունը, թե «Անգամ մը ևս շնչովեցավ այն բացառիկ դիրքը, որ Սեծի Տաճի Կիլիկիո կաթողիկոսության վերապահված ված է՝ իրու կեղունը սփյուռքահայության» («Հասկ», 1966, թիվ 10, էջ 413):

Այս բոյորդ կկարծենք բավարար նիմունքներ են, որ Մայր Աթոռիս մտահոգությունները արդարացի ըլլան:

Ազգիս Վեհափառ Հայրապետուր և Մայր Աթոռ ու Էջմիածինը միշտ պիտի մնան սպասող, որ հարգվին հայ եկեղեցւուն նվիրագետության ախանտական կարգն ու իրավատության սահմանները և հայ եկեղեցւուն միության և մեկության պատմական սկզբունքը՝ սորք Էջմիածինի գլուխավորությամբ, սկզբունքը, որ ամբողջապես կհամապատասխան նաև հայ ժողովորդի ազգային նիմունական ու տեվական շահերուն:

Մնամք աղոթակից եղբայր ի Քրիստու՝

### ՀԱՅԿԱԶՈՒՆ ԱՐԳԵՇՊԻՍԿՈՊՈՍ Ատենապետ Գերագոյն Բոգնոր Խորհրդի

Սեր կարծիքով Մայր Աթոռը սկզբունքով առարկություն չեր ունենա Տաճի Կիլիկիո գահակալի այցելությանց Էջմիածինի հշամատության ներքեւ գտնվող եկեղեցիներին և համապնդներին, սակայն Ամենայն Հայոց Հայրապետի գիտությամբ և օրինությամբ, և ո՞չ այն ոգով ու գործեալկերպով, որ ի հայտ եկավ նաև այս առթիվ՝ մի անգամ ևս ապացուցելով մեզ բողորիս, թե Անթիլիասը ծոյն համապարհներով է ընթանում՝ միշտ կասկածելի նպատակներ հետապնդելով:



Հունիս ամավա սկզբներին Մայր Աթոռում ստացվեց Վատիկանի պաշտոնաթերթ «Լ'Օսկրատորն Ռոմանո»-ի մայիսի 19-ի համարը, որտեղ լոյս է տեսել պաշտոնական հաղորդում S. S. Խորեն Ա. Կիլիկիո կաթողիկոսի՝ Վատիկան, Ն. Սրբություն Պողոս Զ պրազան Պապին տված այցելության մասին:

Այս առթիվ Գերագոյն Բոգնոր Խորհրդի ատենապետ ու Հայկազուն արքեպիսկոպոս, յարգմանը հանդիսանալով Վեհափառ Հայրապետի մտահոգությանց, հետևյալ գրությունը հղեց Վատիկան:

Ս. Էջմիածին, 20 հունիս 1967

**Նորին Գերագանցություն կարդինալ Բեային՝ նախագահ Քրիստոնեական Միության Քարտուղարության**

Վատիկան

Ձեր գերազանցություն,

Հոգեկան խոր գոհունակությունն է մեզ համար Ձեզ ուղղել մեր եղբայրական ողջունը Մայր Աթոռ ու Էջմիածինց և հեկ Ձեզ մեր սուս գիրը:

Գրում ներք Ձեզ համար մեր մտահոգությունը՝ կապված հայ եկեղեցու ծոցում տապալ տարիներից ի վեր ծագած ներքին տագնապի, որ իր վերջին արտահայտությունը գտավ Ն. Ս. Խորեն Ա. Կիլիկիո կաթողիկոսի այցելության առթիվ Վատիկան, անցյալ մայիսի 10-ին՝ իբրև հյուրը Նորին Սըրբություն Պողոս Զ Պապին:

Սեզ բոլորիս համար հոյս ուրախալի է, որ հայ եկեղեցու բարձրաստիան ներկայացուցիչներ հյուրասիրվեն և պատիվների արժանանան ձեր եկեղեցու և Ձեր կողմից, ինչպես եղավ Տաճի Կիլիկիո Խորեն Ա. կաթողիկոսի այցելության պարագան, սակայն մենք խորհում ենք, թե նաև ցանկալի առիթներով պետք է ուղղի կերպով հարգվեն պատմականորեն նվիրագործված տիտղոսները, համամակները և իշխանության սահմանները:

Մենք կարդացիք «Լ'Օսկրատորն Ռոմանո»-ի 19 մայիս 1967 թվակիր ձեր պաշտոնաթերթին մեջ՝ «Երեքշարժի մայիս 10-ին Սուրբ Հայոց հանդիսավոր ունկնդրության ընդունեց պատրիարքը ուղլավագ հայ եկեղեցու, Ն. Սըրբություն կաթողիկոս Խորեն Ա. Կիլիկիո»:

ԽԱԿ Նորին Սրբություն Պատին խոսքին մեջ՝ «Ձեր անձին մեջ մենք ողջ շունչով ենք ամրող հայ եկեղեցին, որ մեծ Հայաստանի Էջմիածնի հարգամեծար կաթողիկոսի նեա, դուք դեկալարում եք բրիսունեական կանքի աշխատանքի դաշտում»:

Կարծում ենք, թե ձեր մեծ եկեղեցուն և Ձերդ Գերազանցության բավարար չափով ծանոյ պետք է լինեն հայ եկեղեցու պատմությունը, նվիրագետական կարգը և եկեղեցական կերպունենքի իրավասությանց ամենանները:

Հայաստանաց առաքելական եկեղեցին մեկ ու անբաժան մի եկեղեցի է, որ ունի մեկ գերազույն պետ՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսի անձի մեջ ի ս. Էջմիածնի։ Հայ եկեղեցու կիլիկյան Աթոռը, իշխան Երոսաղեմի և Կ. Պոլսի Առողջերը, տեղական իրավասությունները ունեցող Աթոռուներ են, որոնք առանձինն երբեք չեն Եերկայացրել հայ եկեղեցին մեր պատմության տասնվեց դարերի ընթացքում։ Որեմն Անթիւաս տեղափոխված կիլիկյան Աթոռը հանգամաներ չունի հայ եկեղեցու Եերկայացնելու, և ոչ էլ «Էջմիածնի կաթողիկոսին» հետ բաժանելու դեկալարությունը մեր եկեղեցու և մեր ժողովուրդին։ Անթիւասի կիլիկյան Աթոռը գտնվում է ս. Էջմիածնի հոգևոր վերին հեղինակության ներքև, իբրև հայ եկեղեցու նվիրագետության ծոցին մեկ տեղական հոգեվոր կեդրոն։ Խակ եթե Անթիւաս ձգուեր ինքն իբրև ներկայացնել իբրև հայ եկեղեցու գլուխ կամ հավասարազոր Մայր Աթոռ ս. Էջմիածնին, այդ պարագային նաև կոհիմներ դեսի բաժանում։ Եվ շատ ցավակի պիտի լիներ նոր բաժանումներ առաջ բերել եկեղեցիների ծոցում մեր օրերին, երբ բոլորս սիրում ենք խոսել միության մասին։

Անթասկանակի թվաց մեզ նաև Արտավազու եպիսկոպոս Թրթրյանի իբրև «Եսիսկոպոս Հայոց Ֆրանսիայի» հիշատակությունը նոյն ձեր պաշտոնաթերթին մեջ, որ բառով չի համարատափանում ո՞չ իրավական և ո՞չ էլ իրական կացության։

Կարդարով ձեր վերոնիշյալ պաշտոնաթերթը, խորհեցինք եղբայրաբար գրել Ձեզ այս սովորը՝ հայտնելու համար մեր եկեղեցու և Մայր Աթոռ սուրբ Էջմիածնի լորջ մտահոգությունը՝ հուալով, թե այն իր արդար արձագանքը կգունի Վատիկանի դեկալար բարձր շրջանների մեջ։

Համեցեք, Ձերդ Գերազանցություն, ընդունել իմ ջերմագին ողջովներ և իմ բարի մաղյանքը Ձեր մեծ առաքելության հաջողության համար։

Սիրով ի Քրիստու՝

ՀԱՅԿԱԶՈՒՆ ԱՐՁԵՊԻՍԿՈՊՈՍ  
Ատենապետ Գերազույն հոգևոր խորիրդի

